

**Պետական գնումների համակարգի
2016-2017 թթ. մոնիտորինգի
արդյունքները**



**Երևան
2017թ.**

Սույն զեկույցի պատրաստումը և տպագրությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ (դրամաշնորհ N19456): Չեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ծրագրի աշխատակազմ
Վարուժան Յոկտանյան
Ծրագրի ղեկավար

Արսեն Համբարձումյան
Գնումների գծով փորձագետ

Վանուհի Մաթևոսյան
Ծրագրի մասնագետ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Հայաստան, Երևան 0002,
Սարյան 12
Հեռ.՝ (+374 10) 569589, 569689
Էլ. փոստ՝ info@transparency.am
www.transparency.am

Բովանդակություն

Ներածություն	4
ՀՀ հանրային գնումների ներկա օրենքը.....	5
Պետական գնումներին առչվող պաշտոնական կայքերի խնդիրները	10
Շրջանակային համաձայնագրերի միջոցով կազմակերպած գնումների ընդհանրացում և ամփոփում (Ժամանակահատված՝ 2016թ. հունվար-դեկտեմբեր).....	12
Մեկ անձից կատարված գնումների մոնիտորինգ (2016թ. հունվարի 1-2017թ. հունիսի 30 ժամանակահատված)	14
Բողոքարկման համակարգի մոնիտորինգ	17
Օրենքի շրջանակներում (գործողության ոլորտում) կազմակերպված ընթացակարգերի ընտրանքային կարգով ուսումնասիրություն.....	19
Հավելված 1	19
Առաջարկություններ եվ դիտողություններ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	26
Հավելված 2.	36
Ֆայլերի բեռնման հետ կապված խնդրի օրինակ	36
Հավելված 3.	36
Որոշման համակարգի խնդրի օրինակ	37
Հավելված 4	38
Գնումների պլանի, կազմակերպվող ընթացակարգերի և շնորհվող պայմանագրերի միասնական թվային ծածկագրման համակարգի ներդրման մոդել	38
Հավելված 5	40
Գնման գործընթաց կազմակերպելու մասին ՀՀ կառավարության մի շարք որոշումների հիմնավորումների վերլուծություն	40
Հավելված 6	46
Գնումների բողոքարկման խորհրդի 2017 թ. գործունեության որոշ ցուցանիշներ	46

Ներածություն

Հանրային գնումների համակարգը կարևոր դեր է կատարում ցանկացած երկրի տնտեսության մեջ, հատկապես զարգացող երկրներում: Նույնը վերաբերում է նաև Հայաստանի տնտեսությանը: Համաձայն ՀՀ 2016թ. պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ հաշվետվության (տե՛ս http://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2016_t_tarekan), ՀՀ-ում պետական մարմինների կողմից իրականացված գնումների ընդհանուր ծավալը կազմել է ավելի քան 337 մլրդ. ՀՀ դրամ, ինչը կազմում է պետբյուջեի ընդհանուր ծախսերի ավելի քան 23.2%-ը (2015թ.-ին այդ ցուցանիշը կազմում էր մոտ 30%):

Հանրային գնումների համակարգի արդյունավետության, թափանցիկության և օրինավորության բարելավումը կնպաստի երկրի կայուն ու երկարաժամկետ տնտեսական զարգացմանը: Մինևույն ժամանակ, թե՛ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակառոտակցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) վերլուծությունները, թե՛ հայաստանյան մամուլում վերջին տարիներին տեղ գտած բազմաթիվ հրապարակումները վեր են հանել հանրային գնումների համակարգում տեղ գտած բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք, ինչպես ցույց են տվել թե՛ տեղական, և թե՛ միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունները, զգալի չափով նաև պրակտիկայում գնումների օրենսդրության անբավարար կիրարկման հետևանք են: Դեռևս զգալի է մեկ անձից կատարվող գնումների տեսակարար կշիռը, կան խնդիրներ կապված գնումների բողոքարկման համակարգի հետ: Այս և համակարգում առկա այլ կոռուպցիոն ռիսկերը և դրսևորումները, ինչպես նաև այլ չարաշահումները կարող են էապես վտանգել նաև երկրի տնտեսական անվտանգությունը: Նշված հիմնախնդիրների լուծմանը կարող է նպաստել իրավական ակտերի պատշաճ կիրարկումը, ոլորտի թափանցիկության ընդլայնումը և հասարակության տեղեկացվածության աստիճանը:

2006 թ. նոյեմբերից սկսած «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակառոտակցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպությունը՝ սկզբում Բաց հասարակության ինստիտուտ- Բուդապեշտի, իսկ այնուհետև Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի աջակցությամբ իրականացնում էր ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգ: Մոնիտորինգի նպատակն էր բացահայտել և վերլուծել ՀՀ հանրային գնումների ոլորտում տեղ գտած կոռուպցիոն ռիսկերը և դրանց պատճառները, նպաստել ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության ընդլայնմանը, վեր հանել գնումները կարգավորող օրենսդրության և նրա կիրարկման բացերը և այդ ամենի հիման վրա համապատասխան պետական մարմիններին ներկայացնել առաջարկություններ դրանց հաղթահարման ուղղությամբ:

Սույն հրապարակման մեջ ամփոփված են կազմակերպության կողմից 2016թ. սեպտեմբերից մինչև 2017թ. օգոստոս իրականացված մոնիտորինգային ծրագրի արդյունքները: Մոնիտորինգի են ենթարկվել ողջ 2016 թվականի և 2017թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ հանրային ոլորտում իրականացված գնման գործընթացների որոշ բաղադրիչներ, ինչպիսիք են օրենսդրական դաշտը, գնումներին առնչվող պաշտոնական կայքերը, մեկ անձից գնումները, բողոքարկման համակարգը և շրջանակային համաձայնագրերը (ուսումնասիրվել են միայն 2016թ. ընթացքում կնքված համաձայնագրերը): Իրականացվել է նաև գնման ընթացակարգերի ընտրանքային ուսումնասիրություն: Մոնիտորինգի մեթոդաբանության հիմքում ընկած է համապատասխանության (compliance) մոնիտորինգի մեթոդը, երբ ուսումնասիրվում է, թե որքանով պրակտիկայում ճշգրիտ են կիրարկվում գնումների օրենսդրության դրույթները: Բացի այդ հավաքագրվել և վերլուծվել է մոնիտորինգային ընտրված ուղղությունների վերաբերյալ վիճակագրությունը:

ՀՀ հանրային գնումների ներկա օրենքը

Ճրագրի իրականացման ընթացքում օրենսդրական հիմնական զարգացումը դա գնումների մասին ՀՀ նոր օրենքի ընդունումն էր: Օրենքն ԱԺ կողմից ընդունվեց 2016թ. դեկտեմբերի 16-ին, հրապարակվեց 2017թ. հունվարի 25-ին և ուժի մեջ է մտել 2017թ. ապրիլի 25-ին: «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր ԱՀԿ պետական գնումների համաձայնագրի նոր տեքստին և Եվրասիական տնտեսական միության պայմանագրին համապատասխանության ապահովմամբ:

ՀՀ գնումների նոր օրենքով գնումները կարգավորող օրենսդրության մեջ մտցվեցին մի շարք կարևոր դրական տարրեր: Նոր օրենքն ավելի թափանցիկ է դարձնում հանրային գնումների համակարգը՝ ընդլայնելով այն տվյալների բազմությունը, որոնք պարտադիր կերպով պետք է հրապարակվեն գնումների պաշտոնական կայքէջում: Մյուս կարևոր փոփոխությունը դա գնումների ընթացակարգերի թվի կրճատումն է՝ նախկին 7-ի փոխարեն նոր օրենքով սահմանված է 4 ընթացակարգ, որը միտված է պարզեցնելու ընթացակարգի ընտրությունը գնման գործընթացին մասնակցել ցանկացող տնտեսվարող սուբյեկտի համար: Նոր օրենքով մտցվում է նաև իրական սեփականատերերի ինստիտուտը, որը նույնպես կարելի է համարել դրական, չնայած ոչ բավարար քայլ: Եվ վերջապես, ներմուծվել է բողոքարկման նոր համակարգ, որը, ենթադրվում է, որ կլինի ավելի անկախ, քան նախկին համակարգն էր: Այն նաև մշտական գործող է և մասնագիտացված, ի տարբերություն նախկին համակարգի, երբ բողոքարկման խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում էին հասարակական հիմունքներով՝ առանց վարձատրության:

Միևնույն ժամանակ, գնումների մասին ներկա օրենքը պարունակում է որոշակի լուրջ բացեր: Այդ բացերից բխող առավել սկզբունքային հիմնախնդիրներից է գնման գործընթացում ներգրավված պաշտոնատար անձանց (պատվիրատուի ղեկավարի, պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների, գնահատող հանձնաժողովի անդամների) իրավունքները, պարտականությունները, ինչպես նաև դրանք չարաշահելու կամ չկատարելու համար պատասխանատվության ենթարկվելու հարցն է, որը ընդունված օրենքում ուղղակիորեն նախատեսված չէ: Մյուս հիմնախնդիրը դա գնումների բողոքարկման խորհրդի անկախության և իրավական կարգավիճակի հարցն է, որն օրենքով կարգավորված չէ:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի XXII Բաժնի 88-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ պարբերության համաձայն՝ *անդամ պետությունները պետական (մուսիցիպալ) գնումների ոլորտում (այսուհետ՝ գնումներ) սահմանում են կարգավորման հետևյալ նպատակներն ու սկզբունքները՝ ... գնումների մասին օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվության սահմանում:*

Նույն պայմանագրի 25-րդ հավելվածի 4-րդ բաժնի 37-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ *գնումների ոլորտում անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովման, ինչպես նաև անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակներով անդամ պետություններից յուրաքանչյուրն իր օրենսդրությանը համապատասխան, ապահովում է անդամ պետության պետական իշխանության՝ գնումների ոլորտը կարգավորող և (կամ) հսկող լիազոր մարմինների առկայությունը: Ընդ որում՝ թույլատրվում է այդ գործառույթների կատարումը մեկ մարմնի կողմից, որի իրավասության մեջ մտնում են, այդ թվում՝ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրության խախտման դեպքերի կանխարգելումը և հայտնաբերումը, ինչպես նաև նշված խախտումների վերացմանն ուղղված միջոցների ձեռնարկումը (այդ թվում՝ այդ խախտման դեպքերի վերացման վերաբերյալ*

պարտադիր կատարման ենթակա հանձնարարական տալու և այդ խախտումների համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջոցով):

Գնումների մասին ներկա օրենքում նշված է, որ գնումները համակարգողը՝ ով ի պաշտոնե նաև գնահատող հանձնաժողովի քարտուղարն է և պատասխանատվություն է կրում հանձնաժողովի գործունեության՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության համար (տե՛ս օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը): Մինևույն ժամանակ, գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատող ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 26-րդ կետի 8-րդ կետի համաձայն, հանձնաժողովի անդամ չհանդիսացող պաշտոնատար անձի՝ հանձնաժողովի գործունեությանը միջամտությունը հանգեցնում է այդ պաշտոնատար անձին ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու նպատակով միջոցների ձեռնարկմանը: Նկատի ունենալով գնումների մասին օրենքի վերը նշված 26-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթը, ըստ որի գնահատող հանձնաժողովի քարտուղարը չի հանդիսանում այդ հանձնաժողովի անդամ, ստացվում է, որ հանձնաժողովի քարտուղարը որևէ իրավունք չունի միջամտելու կամ այլ կերպ կանխելու հանձնաժողովի կողմից ընդունվող ոչ իրավաչափ և օրենքին հակասող որոշումների ընդունմանը: Սա արդեն կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ հանձնաժողովի անդամը պատասխանատվություն չի կրելու հանձնաժողովի կողմից ընդունվող ոչ իրավաչափ և օրենքին հակասող որոշումների ընդունման համար:

Ինչպես նախկին օրենքով, այնպե՛լ էլ ներկա օրենքով սահմանված չեն գնումների գործընթացում ներգրավված պաշտոնատար անձանց իրավունքները և պարտականությունները շատ անորոշ և ընդհանուր են սահմանված: Ինչպես և նախկին օրենքի գործողության ժամանակ, այնպես էլ ներկա օրենքի ուժի մեջ մտնելով՝ դրանք ավելի որոշակի և հստակ սահմանված է օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտով, այն է, ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ:

06.12.2015թ-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն:**

*Այս կապակցությամբ անհրաժեշտ է դիտարկել գնման գործընթացի ամբողջությունը կազմող **գործառույթների շրջանակի** սահմանումը, գնման գործընթացի հետ առնչվող **անձանց** սպառիչ ցանկի սահմանումը և այդ **անձանց իրավունքները և պարտականությունների** ամրագրումը օրենքով հստակ սահմանելու հարցը, ինչպես նաև քննարկել ընդունված օրենքը խախտելու համար **պատասխանատվություն** (քրեական, վարչական) սահմանելու հարցը՝ նախատեսելով կոնկրետ դրույթներ համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքում և ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում:*

Ինչ վերաբերում է գնումների բողոքարկման ինստիտուտին, ապա ԱՀԿ պետական գնումների համաձայնագրի XVIII հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ «յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի ժամանակին, արդյունավետ, թափանցիկ և անխտրական վարչական կամ դատական քննության ընթացակարգ, որի միջոցով մատակարարը կարող է վիճարկել:

ա. Համաձայնագրի խախտումը, կամ

բ. Կողմի կողմից սույն Համաձայնագրի իրականացման համար ձեռնարկված միջոցների չպահպանումը, եթե մատակարարը իրավունք չունի վիճարկել ուղղակիորեն Համաձայնագրի

խախտումը համաձայն Կողմի ներպետական օրենսդրության, ելնելով նշված գնման համատեքստից, որի առնչությամբ մատակարարը շահ ունի կամ ունեցել է: Բոլոր վիճարկումների համար ընթացակարգային կանոնները պետք է սահմանվեն գրավոր և լինեն ընդհանուր առմամբ, հասանելի:

Եթե մատակարարի կողմից ներկայացվում է բողոք 1-ին կետով նշված խախտման կամ դրույթների չպահպանման համար, ելնելով նշված գնման համատեքստից, որի առնչությամբ մատակարարը շահ ունի կամ ունեցել է, ապա գնումն իրականացնող պատվիրատուի Կողմը պետք է քաջալերի կազմակերպությանն ու մատակարարին գտնել հարցի լուծումը խորհրդակցությունների միջոցով: Մարմինը պետք է ապահովի ցանկացած նման բողոքի անկողմնակալ և ժամանակին քննությունը, այնպես, որ չխոչընդոտի մատակարարի մասնակցությանը ընթացիկ կամ հետագա գնմանը, կամ նրա՝ վարչական կամ դատական քննության ընթացակարգով ուղղիչ միջոցառումների համար դիմելու իրավունքի իրականացմանը»:

XVIII հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «յուրաքանչյուր Կողմ պետք է ստեղծի կամ նշանակի առնվազն մեկ անկողմնակալ վարչական կամ դատական մարմին, որն անկախ է իր պատվիրատուներից, նշված գնման համատեքստում ծագած հարցով մատակարարի կողմից ներկայացված հայցը ստանալու և քննելու համար»:

Գնումների մասին ՀՀ օրենքի 46-ից 51-րդ հոդվածները նվիրված են գնումների բողոքարկման գործընթացին, բողոքարկման խորհրդին, խորհրդի կողմից ընդունվող որոշումներին: Օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **«սույն օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման համար խորհրդի անդամը ստանում է վարձատրություն պետական բյուջեի միջոցների հաշվին՝ լիազորված մարմնի միջոցով»:** Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **«սույն օրենքով խորհրդին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններն ապահովում է լիազորված մարմինը»:**

Վերը նշված հոդվածների տառացի մեկնաբանությունից ակնհայտ է դառնում անհամապատասխանությունը ԱՀԿ պետական գնումների վերանայված համաձայնագրի XVIII հոդվածի 4-րդ կետին, քանի որ խորհուրդը չունենալով սեփական աշխատակազմ և աշխատանքային պայմաններով և ֆինանսապես կախման մեջ գտնվելով լիազորված մարմնից (որն իր հերթին հանդիսանում է պետական պատվիրառու) չի կարող համարվել անկախ՝ պետական այլ պատվիրատուներից: Փոխարենը օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով փորձ է արվել բողոքել տվյալ խնդիրը, համաձայն որի՝ **«խորհուրդը անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով, և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Խորհրդի անդամները բողոքներն ուսումնասիրում են պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Խորհրդի անդամները սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ են գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր են բացառապես ղեկավարվել օրենքով և կիրառել այն»:**

Վերլուծելով վերը նշվածը պարզ է դառնում, որ խորհրդի թվացյալ անկախությունը կրում է զուտ ձևական բնույթ և խորհուրդը զերծ չի մնալու լիազորված մարմնի ազդեցությունից, քանի որ հակառակ դեպքում նրա գործունեությունը կաթվածահար կլինի սեփական աշխատակազմը չունենալու հետևանքով:

Օրենքով սահմանվում է միայն բողոքարկման խորհրդի ձևավորման կարգը և անդամների պաշտոնավարման ժամկետները, սակայն որևէ ձևակերպում տրված չէ բողոքարկման խորհրդի իրավական կարգավիճակին, բողոքարկման խորհրդի կողմից ընդունվող որոշումների իրավական

կարգավորմանը, ինչպես նաև բողոքարկման խորհրդի որոշումները դատական կարգով բողոքարկելու ժամկետներին:

«խորհուրդ» եզրույթը բովանդակային իմաստով ենթադրում է մի քանի անձից բաղկացած մարմին, որը գործում է կոլեգիալության սկզբունքով: Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«բողոքը քննվում է խորհրդի անդամի կողմից՝ միանձնյա, ղեկավարվելով սույն օրենքով և նորմատիվ իրավական այլ ակտերով: Բողոքը քննելիս խորհրդի անդամը հանդես է գալիս որպես գնումների բողոքարկման խորհուրդ»:** Հոդվածի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ բողոքը քննող պաշտոնատար անձը գործելու է միանձնյա, հետևաբար անվանումը արդեն իսկ չի համապատասխանում տվյալ մարմնի գործունեության կարգին:

Բացի այդ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **«սույն օրենքի հիման վրա և դրա պահանջների կատարման նպատակով խորհուրդը հաստատում է իր գործունեության կարգը՝ անդամների ձայների մեծամասնությամբ»:**

Ձայների մեծամասնությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի խորհրդի կազմը բաղկացած լինի առնվազն երեք անդամից, հակառակ դեպքում օրենքի պահանջը հնարավոր չի լինի իրականացնել: Ներկա դրությամբ խորհրդում կա միայն երկու անդամ, որոնք նշանակվել են ՀՀ Նախագահի 2017թ. մարտի 3-ի ՆՀ-282-Ա հրամանագրով:

Բողոքարկման խորհուրդն ընդունում է որոշումներ, որոնք իրավունքներ և պարտականություններ են սահմանում մասնավոր, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար և այդ որոշումներն իրավապարտադիր են: Ինչպես նախկին, այնպես էլ ներկա օրենքով սահմանված է, որ բողոքարկման խորհրդի որոշումները կարող են բողոքարկվել դատարան:

Օրենքի համաձայն՝ գնումների, այդ թվում բողոքի քննության հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ (տե՛ս օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը): Օրենքի տրամաբանությունից հետևում է, որ բողոքարկման խորհրդի որոշումները հնարավոր է բողոքարկել միայն ընդհանուր իրավասության դատարան և հետևաբար այդ հարաբերությունները կարգավորվելու են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **«պատասխանողներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնց դեմ հայց է հարուցվել»:**

Դատական կարգով բողոքարկման խորհրդի որոշումը բողոքարկելու դեպքում որպես պատասխանող հայցադիմումում նշվելու է բողոքարկման խորհուրդը: Տվյալ դեպքում հարց է առաջանում՝ բողոքարկման խորհուրդը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերը նշված հոդվածի իմաստով ինչ կարգավիճակով է որպես պատասխանող հանդես գալու, չունենալով իրավաբանական անձի կարգավիճակ: Լիազորված մարմնի պնդմամբ բողոքարկման խորհրդի անդամն է հանդես գալու որպես ֆիզիկական անձ, ինչը զուրկ է ցանկացած տրամաբանությունից, քանի որ օրենքի 49-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ **«բողոքը քննվում է խորհրդի անդամի կողմից՝ միանձնյա, ղեկավարվելով սույն օրենքով և նորմատիվ իրավական այլ ակտերով: Բողոքը քննելիս խորհրդի անդամը հանդես է գալիս որպես գնումների բողոքարկման խորհուրդ»:** Հետևաբար վերջինս դատարանում չի կարող հանդես գալ որպես ֆիզիկական անձ, քանի որ բողոքների վերաբերյալ որոշումներն ընդունվում են խորհրդի անունից:

ԱՀԿ Համաձայնագրի և ընդունված օրենքի դրույթների համակարգային վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը չի համապատասխանում Համաձայնագրի վերը նշված պահանջներին և այդ առումով չի արդարացնում օրենքի ընդունման նպատակը, քանի որ նոր օրենքի ընդունումը պայմանավորված է եղել Համաձայնագրի փոփոխված

տեքստի վավերացմամբ և Եվրասիական տնտեսական միության մասին պայամանագրին պահանջներին ներպետական օրենսդրության համապատասխանությամբ:

Այդ կապակցությամբ առաջարկում ենք բողոքարկման խորհրդին տալ իրավաբանական անձի կարգավիճակ, որի արդյունքում կլուծվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների միջև առկա հակասությունը:

ԹԻՅԿ-ը նաև իր առաջարկություններ և դիտողություններն է ներկայացրել գնումների մասին ներկա օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ: Այդ նախագծերը հետագայում ընդունվեցին կառավարության որոշումների տեսքով:¹ Այդ առաջարկությունները և դիտողությունների կարելի գտնել կազմակերպության կայքի «Հանրային գնումների հասարակական վերահսկողության համակարգ» էջում (տե՛ս <https://transparency.am/gnumner/legislation/>): Բացի այդ, նույն էջում կարելի է գտնել նաև կազմակերպության առաջարկությունները և դիտողությունները Գնումների ներկա օրենքի վերաբերյալ, որոնք ներկայացվեցին ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2017թ.փետրվարի 17-ի նիստում: ՀՀ ֆինանսների նախարարությունն արձագանքեց ԹԻՅԿ-ի կողմից N526-Ն որոշման (գնումների գործընթացի կազմակերպման կարգի վերաբերյալ) ներկայացված առաջարկություններին՝ ամփոփաթերթի տեսքով: Այդ առաջարկությունները և կառավարության կողմից դրանց վերաբերյալ արձագանքը բերված է **Հավելված 1**-ում:

¹ Դրանք են Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 5-ի N1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի N386-Ն որոշումը (այս որոշման վերաբերյալ առաջարկությունները նպատակաուղղված են գնումների միասնական ռեգիստրի ծածկագրման համակարգ ստեղծելուն), Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի N390-Ն որոշումը և Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշումը:

Պետական գնումներին առչվող պաշտոնական կայքերի խնդիրները

2016թ. հուլիսի 7-ի կառավարության նիստում այն ժամանակ վարչապետ Յուրիկ Աբրահամյանը հայտարարել էր, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը էլեկտրոնային գնումների համակարգի www.armeps.am հիմքի վրա մշակել է էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողության մոդուլ (www.armeps.am/ppcm), որը հանրությանը հասանելի է և պետական կառավարման մարմինների կողմից շահագործվում է հուլիսի 1-ից, իսկ քաղաքները դրան կմիանան նույն թվականի սեպտեմբերի 1-ից: Սակայն մինչև մոնիտորինգի իրականացման ավարտը (2017թ. հունիսի 30) կայքն իր վերջնական տեսքը չի ստացել և դեռ կատարվում են ընթացիկ աշխատանքներ:

Մասնավորապես, տեղեկատվությունը բավականին ցրված է և դժվար է որոնողական համակարգով տեղեկություն ձեռք բերելը: Նոր գործարկված կայքի ստեղծումով ենթադրվում էր, որ խնդիրը կլուծվեր: Սակայն նորից առկա են որոնողական համակարգի և տեղեկատվության ձեռք բերման դժվարություններ: Բացի այդ, www.armeps.am/ppcm-ում պայմանագրերի մասին ընդհանուր տեղեկատվության ամբողջական ֆայլ (excel կամ csv) բեռնել թույլ չի տալիս, առանց որի բարդանում է մոնիտորինգի ենթարկել տեղադրված պայմանագրերը (տե՛ս **Հավելված 2**): Խնդիր կա նաև որոնողական համակարգի հետ, երբ մատակարարը գրանցված է տարբեր անուններով (տե՛ս **Հավելված 3**): Ուշագրավ է, որ խնդիր կա նաև armeps.am-ում տեղադրված պայմանագրերի քանակի հետ: Օրինակ, 2016թ. բանակցային ընթացակարգ առանց հայտարարության (այսինքն մեկ անձից գնումների) 6898 պայմանագիր տեղադրված է www.e-gov.am կայքում, իսկ www.armeps.am/ppcm կայքում հրապարակված է ընդամենը 1183 հատ պայմանագիր: Դրա հետ մեկտեղ, www.armeps.am/ppcm -ում հրապարակված մեկ անձից գնումների առնվազն ընդհանուր 345 մլն պարտավորությունն առաջացրած 338 պայմանագիր բացակայում է www.e-gov.am կայքում (դրանց շուրջ 92 տոկոսը ներկայացուցչական ծախսերի և գործուղումների պայմանագրեր), ինչը փաստում է երկու հարթակների նույն տեղեկատվության անհամապատասխանության և տվյալների թերի լինելու մասին:

Մոնիտորինգի իրականացման ժամանակամիջոցում www.e-gov.am կայքից տվյալներ հավաքագրելուց պարբերաբար ավելանում էին պայմանագրեր ավելի վաղ կնքված պայմանագրեր, որը ավելորդ դժվարություններ էր ստեղծում:

Բազմաթիվ թերություններ կան նաև www.gnumner.am կայքում, որը գնումների պաշտոնական տեղեկագիրն է: Դրանցից մի քանիսը հարկ ենք համարում նշել.

«Գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրությունները» բաժինն ակնհայտորեն թերանում է հաշվետվողականության հարցում: Ընթացակարգերի արձանագրությունները կամ բացակայում են, , կամ շատ թերի են, օրինակ բաց ընթացակարգի դեպքում պետական հիմնարկների գնումների բաց ընթացակարգով գնումների գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրություններից տեղադրված են ընդամենը 15-ը, այնինչ ըստ Գնումների աջակցման կենտրոնի (ԳԱԿ) գեկույցի, 2016թ. բաց ընթացակարգով կայացած գնումների թիվը հասնում էր 112-ի: Նույն պատկերն է նաև առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում, իսկ հանրային կազմակերպությունների գնումների որևէ ընթացակարգով որևէ արձանագրություն տեղադրված չէ:

«Բողոքարկում» բաժնում հրապարակված 133 բողոքներից 17 տոկոսի մասին կայացված որոշումները կայքում տեղադրված չեն, ինչը փաստում է ամբողջական տվյալների հրապարակայնության թերության մասին:

Ընդհանուր առմամբ, բոլոր բաժիններում բացակայում է ֆիլտրման համակարգը, ինչը բարդացնում է առհասարակ որևէ տեղակատվության տեսակավորումը ըստ տարիների, պատվիրատուների կամ մատակարարների:

ՀՀ պետական գնումներին առնչվող վերը նշված կայքերը, ինչպես նաև www.armeps.am/eauction կայքը (Էլեկտրոնային աճուրդի համակարգ, որը գործելու է 2017թ-ի հոկտեմբերից)

Գնումների էլեկտրոնային միջավայրը բաղկացած է հետևյալ աղբյուրներից՝

- www.procurement.am - գնումների պաշտոնական տեղեկագիր,
- www.armeps.am-
- www.armeps.am/ppcm - հաշվետվողականության մոդուլ,
- www.e-gov.am/transparent/ - Մեկ անձից կատարվող գնումներ(չի թարմացվում 06.17-ից)

Կարծում ենք, անհրաժեշտ է դրանք հնարավորինս արագ միացնել և հասանելի դարձնել մեկ միասնական խորագրի ներքո (www.procurement.am): Միացումը հիմք կհանդիսանա գնումների մեկ միասնական ռեեստրի ստեղծման համար: Ռեեստրի ստեղծումով և առաջարկվող ձևով վարելով կլուծվի տեղեկատվության ամբողջականության, թափանցիկության, մատչելիության, պատվիրատուների նկատմամբ նախնական վերահսկողության, մասնակիցների ներգրավման հարցերը:

Անհրաժեշտ է հաստատել ռեեստրի վարման կարգ, որով թույլատրել և մուտքի հնարավորություն տալ բոլոր պատվիրատուներին ինքնուրույն ներբեռնելու հրապարակման ենթակա նախնական տեղեկատվությունը, որը լիազորված մարմնի կողմից կենտրոնացված կարգով ստուգվելուց հետո նոր կիրառարակվի: Դրանով իսկ կիրականացվի լիազորված մարմնի կողմից նախնական օպերատիվ հսկողություն կազմակերպվող գնումների օրինականության և պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության ժամանակին հրապարակման համար: Ռեեստրում տեղեկատվությունը պետք է հրապարակել գնման ընթացակարգի ծածկագրի ներքո, ինչի համար անհրաժեշտ է ծածկագրման միասնական համակարգ: **Հավելված 4**-ում բերված է առաջարկվող այդպիսի համակարգի մոդել: Բացի այդ, ԹԻՀԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանը, որպես գնումների պետական լիազոր մարմին, ներկայացրել է առաջարկություններ «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ (տե՛ս www.transparency.am/gnumner/legislation):² Այդ առաջարկությունների ընդունումը կնպաստի նշված ռեեստրի ստեղծման համար վերը բերված ծածկագրման համակարգի ստեղծմանը:

² Նշված որոշումն ընդունվեց ս.թ. ապրիլի 13-ին և ուժի մեջ մտավ ս.թ. ապրիլի 25-ին (որոշում N 390-Ն):

Շրջանակային համաձայնագրերի միջոցով կազմակերպած գնումների ընդհանրացում և ամփոփում (Ժամանակահատված՝ 2016թ. հունվար-դեկտեմբեր)

Մոնիտորինգային ծրագրի իրականացման ընթացքում հրապարակված վերջին տեղեկագրում (տե՛ս <https://transparency.am/gnumner/bulletins/bulletin5.pdf>) բերված են 2016թ. ընթացքում շրջանակային համաձայնագրերով (ՇՀ) միջոցով ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գնումների մոնիտորինգի արդյունքներն ըստ եռամսյակների: Մոնիտորինգը իրականացվել է՝ հիմնվելով ՀՀ ֆինանսների նախարարության գնումների կայքի՝ www.gnumner.am կայքում տեղադրված գնումների աջակցման կենտրոնի շրջանակային համաձայնագրերի ամսական հաշվետվություններում առկա տվյալների վրա: Սույն հրապարակման մեջ եռամսյակային կտրվածքով ստացված մոնիտորինգային տվյալներն ագրեգացվել են՝ ստանալու համար մոնիտորինգի տարեկան (ողջ 2016թ.-ի համար) կտրվածքով արդյունքները: Մասնավորապես, վեր են հանվել ամբողջ տարվա կտրվածքով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնված ապրանքների, ծառայությունների և աշխատանքների 10-ից ավել մրցույթից բաղկացած ենթաուղղություններն ըստ գնման առարկաների և յուրաքանչյուր ենթաուղղության համար հաշվարկվել է հաղթած 3 մատակարար-կազմակերպությունների գումարային և քանակային կենտրոնացվածության աստիճանը (the three-firm concentration ratio)³: Այս ցուցանիշի արժեքից երևում է, որ պետական մարմինների ՇՀ ընթացակարգով հայտարարած մրցույթներում հաղթող ընկերությունների կենտրոնացվածության աստիճանը շարունակում է մնալ միջին կամ բարձր մակարդակում:

Աղյուսակ 1. 80%-ից բարձր կենտրոնացվածություն ունեցող ենթաուղղությունները ըստ գնված ապրանքների տեսակի

Խոշորագույն ենթաուղղությունները ըստ գնման առարկայի	Ընդհանուր պայմանագրային և գինը	Մրցույթների քանակը ըստ ապրանքատեսակի	Գումարային կենտրոնացվածությունը (C3)[1]
Սպառազինության օժանդակ ապրանքանյութական միջոցներ	12.6	15	100%
Վառելիքի ձեռքբերում	3,449	156	99%
Հաշմանդամների լսողական ապարատներ և սայլակներ	81.6	10	97%
Ավտոմեքենաների ձեռքբերում	379	11	96%
Քիմիական նյութեր	88.5	177	82%
Դեղորայքի և պատվաստանյութեր	3,864	949	81%

2016թ. ընթացքում գնված ապրանքները խմբավորվել են 17 ենթաուղղությունում, որոնցից միայն 5-ի դեպքում գրանցվել է 50%-ից ցածր կենտրոնացվածություն, 6-ի դեպքում միջին կենտրոնացվածություն, իսկ մնացածի դեպքում 80%-ից բարձր:

³ Ցածր կենտրոնացվածություն՝ 0-50%, միջին՝ 50-80%, բարձր՝ 80-100%:

Աղյուսակ 2. 80%-ից բարձր կենտրոնացվածություն ունեցող ենթաուղղությունները ըստ գնված ծառայությունների տեսակի

Խոշորագույն ենթաուղղությունները ըստ գնված առարկայի	Ընդհանուր պայմանագրային գինը, մլն	Մրցույթների քանակը ըստ ապրանքատեսակի	Գումարային կենտրոնացվածությունը (C3)
Պրոթեզաօրթ. պարագաների պատրաստման և վերանորոգ.	1,355.50	125	100%
Տրանսպորտային փոխադրումներ	41.6	18	100%
Ինտերնետային կապ	373	37	99.20%
Հեռախոսակապի ծառայություններ	22.8	19	97.00%
Արհիվացման ծառայություններ	38.9	21	95.20%
Թարգմանության ծառ.	3	62	94.10%
Ավտոմեքենաների վրացման և մաքրման ծառ.	27	15	86.40%

Ձեռք բերված ծառայությունները խմբավորվել են 14 ենթաուղղություններում, որոնցից միայն 2-ի դեպքում կա հաղթող ընկերությունների գումարային ցածր կենտրոնացվածություն, իսկ 7-ում 80%-ը գերազանցող բարձր կենտրոնացվածություն:

Աղյուսակ 3. 80%-ից բարձր կենտրոնացվածություն ունեցող ենթաուղղությունները՝ ըստ ձեռք բերված աշխատանքների

Խոշորագույն ենթաուղղությունները ըստ գնված առարկայի	Ընդհանուր պայմանագրային գինը	Մրցույթների քանակը ըստ ապրանքատեսակի	Գումարային կենտրոնացվածությունը (C3)
Տպագրության աշխատանքներ	2,975.80	430	97%
Մեդալների և կրծքանշանների պատրաստում	49.9	41	100%
Հատուկ պաշտպան. պահանջող՝ պետ. նշանակության փաստաթղթերի տպագրություն	38	22	100%

Աշխատանքների ձեռքբերման ենթաուղղություններից միայն մեկում է նկատվում 50%-ից ցածր կենտրոնացվածություն: Մնացած երեքում բավականին բարձր կենտրոնացվածություն կա ի շնորհիվ խոշոր մատակարարների՝ «Երևանի ոսկերչական գործարան-1 Գևորգյան» ԲԲԸ (94% կշռով) Մեդալների և կրծքանշանների պատրաստման համար հայտարարված մրցույթներում և «Էլեմփիջի գրուպ» ՍՊԸ-ն (83% կշռով)՝ պետական նշանակության փաստաթղթերի տպագրության համար:

Հարկ է նաև նշել, որ ԹԻՅԿ-ը դիմել էր ԳԱԿ լուծարման հանձնաժողովին՝ պարզելու համար թե ինչպես են օգտագործվել ԾՅ ընթացակարգերին մասնակցած, սակայն, խախտումներ կատարելու համար չհաղթած և տուժանքներ վճարած ընկերություններից փոխանցված տուժանքների գումարները: Դժբախտաբար, մինչև սույն հրապարակման պատրաստման ավարտը նշված հանձնաժողովից որևէ պատասխան ԹԻՅԿ-ը չստացավ:

Մեկ անձից կատարված գնումների մոնիտորինգ (2016թ. հունվարի 1-2017թ. հունիսի 30 ժամանակահատված)

Մոնիտորինգի համար երկրորդային տվյալներ են հավաքագրվել 33 էլեկտրոնային կառավարման՝ www.e-gov.am կայքի «Մեկ անձից կատարվող գնումներ» ենթաբաժնից: www.armepps.am կայքում տեղադրված գնումների պայմանագրերի տվյալների հավաքագրում չի իրականացվել, քանի որ տեխնիկական խնդրի պատճառով պայմանագրերի մասին տեղեկությունները չի բեռնվում որպես մեկ ամբողջական Excel ֆայլ:

Ըստ հավաքագրված տվյալների՝ առանձնացվել է մեկ անձի հիմքով կնքված պայմանագրերի երկու խումբ՝ մրցակցության բացակայությամբ պայմանավորված գնումների, որոնք կարող են համարվել օբյեկտիվ և այլընտրանքային առկայության պարագայում ոչ մրցակցային ընթացակարգով իրականացված գնումների պայմանագրերի: Մրցակցության բացակայությամբ պայմանավորված գնումների պայմանագրերը խմբավորվել են հետևյալ բաժիններում՝

- Առողջապահական ծառայությունների ձեռքբերումը,
- Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն,
- Էլեկտրաէներգիայի մատակարարում,
- Բնական գազի բաշխում և գազաասպասարկում,
- Ջրամատակարարում,
- Փոստային ծառայություններ:

2016թ. հրապարկվել է առանց գնումների հայտարարության բանակցային ընթացակարգի համաձայն կնքված 6898 պայմանագիր, որոնց ընդհանուր պայմանագրային գինը կազմում է 98,432 մլն 33 դրամ: 2015թ. մեկ անձից կատարված գնումներով պայմանագրերի թիվը գրեթե կրկնակին էր՝ 12358 պայմանագիր: Քանակային տարբերությունը մեծապես կախված է կրթական ծառայությունների պայմանագրերի բացակայությամբ, որոնք արդեն գնում չեն համարվում:

Մրցակցության բացակայությամբ պայմանավորված գնումները 2016թ. կազմել են մեկ անձից գնումների 82.3 տոկոսը, որի մեծ մասը բաժին է ընկնում առողջապահական ծառայությունների համար կնքված պայմանագրերին: Սակայն մոնիտորինգային մեր հիմնական թիրախը այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային ընթացակարգով իրականացված գնումների պայմանագրերն են:

Ընդհանուր առմամբ մեր կողմից առանձնացված ոչ օբյեկտիվ հիմքով կնքված 1,000,000 33 դրամ բազային միավորը գերազանցած պայմանագրերի թիվը մեկ անձից գնումներում 648 է, իսկ 20 մլն դրամի սահմանաչափը գերազանցած հրապարակված պայմանագրերի թիվը հասնում է 94-ի, ինչը 2015թ. հրապարակված 204 պայմանագրերի համեմատ զգալիորեն պակաս է:

e-gov.am կայքից մեկ անձից պայմանագրերի հավաքագրված պայմանագրերը ըստ գնման առարկաների խմբավորվել են ենթախմբերում, որոնցից ըստ ընդհանուր պայմանագրային գնի խոշորագույնները և այդ ենթախմբում խոշորագույն կշիռ ունեցող մատակարար-ընկերությունները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 4. 2016թ. ըստ գնման առարկայի խոշորագույն ենթախմբերը և խոշորագույն մատակարարները

Այլընտրանքի առկայության պարագայում այլ ոչ մրցակցային ձեռքբերումները ըստ ենթախմբերի	Պայմանագրերի գինը, մլն ՀՀ դրամ	Պայմանագրերի քանակը	Մասնաբաժի նը ոչ օբյեկտիվ գնումներում	Խոշորագույն մատակարար ընկերությունը, կշիռը
Հիգիենայի հետ կապված ծառայություններ	2,961	3	18%	«Հիվանդ. վերահսկ. և կանխարգ. ազգ. կենտրոն» ՓԲԸ, 97.2%
Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	2,735	68	17%	«Սահակյանշին» ՍՊԸ, 37%
Ավիասպասարկում	388	543	17%	«Ավիատուր Գրուպ» ՍՊԸ, 35%
Կապի ծառայություններ	1,015	323	10%	«Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ, 65.3%
Դեղորայք	2,490	9	15%	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 46.4%
Տպագրական աշխատանքներ	1,199	81	7%	«Մանմար» ՓԲԸ, 31.7%
Ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ	729	148	4%	«Նորք» ՏՎԿ ՓԲԸ, 40%
Չինտեխնիկայի ձեռքբերում	725	2	4%	«Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ, 93%
Անշարժ գույքի վարձակալություն	689	283	4%	«Հանարդևախագիծ» ԲԲԸ, 93%
Գյուղատնտեսության մեջ կիրառվող պատվաստանյութեր	432	4	3%	«Կենդանիների առողջ. պահպ. ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ, 93%
Ռենտգեն սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	430	2	3%	«Արեմպա Ինթերնեշնլ» ՍՊԸ ՖՁԵ, 100%
Ավտոմեքենաների նորոգման և պահպանման ծախսեր	409	255	2%	«Տոյոտա Երևան» ՍՊԸ, 73.7%

Վիճակագրական նմանատիպ պատկեր է նկատվում 2017թ. առաջին կիսամյակում:

Այսպիսով, 2017թ. e-gov.am կայքում հրապարակվել է առանց գնումների հայտարարության բանակցային ընթացակարգի համաձայն կնքված 5001 պայմանագիր ընդհանուր 89 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, որոնցից 949-ը նախորդ տարիներին կնքված և 2017թ.-ին համաձայնագրերով երկարաձգված պայմանագրերն են ընդհանուր 13.8 մլրդ պայմանագրային գնով: Դրանք հիմնականում ջրամատակարարման, գազասպառման, էլեկտրաէներգիայի, կապի անշարժ գույքի և ապահովագրական ծառայությունների համար կնքված պայմանագրերն են:

Մոնիտորինգային մեր հիմնական թիրախին՝ այլընտրանքային առկայության պարագայում ոչ մրցակցային ընթացակարգով իրականացված գնումների պայմանագրերին առավել մանրամասն: 2017թ. 1-ին կիսամյակում, ըստ հավաքագրված տվյալների, դրանց տեսակարար կշիռը կազմում է մեկ անձից իրականացված բոլոր գնումների պայմանագրային գնի **11** տոկոսը: Ոչ օբյեկտիվ՝ այսինքն ոչ մրցակցային հիմքով կնքված պայմանագրերի թիվը հասնում է **1474**-ի: Հարկ է նշել, որ վերոնշյալ պայմանագրերից միայն **24** տոկոսի՝ 355 հատ պայմանագրի պայմանագրային գինն գերազանցում բազային միավորը՝ 1 մլն ՀՀ դրամը, սակայն ընդհանուր պայմանագրային գնի 97%-ը՝ 9.6 մլրդ ՀՀ դրամ: Ըստ e-gov.am կայքի հավաքագրված տվյալների ոչ օբյեկտիվ հիմքերով մեկ անձից գնումների պայմանագրային ընդհանուր գումարը 2017 թ.-ին կազմել է **9.8 մլրդ** ՀՀ դրամ:

Այս կիսամյակում կատարված ոչ օբյեկտիվ հիմքով կատարված գնումների համար կնքված պայմանագրերը ևս ըստ գնման առարկաների խմբավորվել են ըստ ենթախմբերի, որոնց առավել մանրամասն կարող եք ծանոթանալ մեր կազմակերպության կողմից թողարկված «Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում 5» միջանկյալ տեղեկագրից : Մեր կողմից առանձնացված ոչ օբյեկտիվ մեկ անձից գնումների 86 տոկոսը e-gov.am կայքում հիմնավորված են ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի տողերով:

Խոշորագույն պատվիրատուն ԱՆ-ն է եղել պատվաստանյութեր ձեռքբերման հաշվին, ԱՍՀՆ ծրագրային սպասարկման ծառայությունների կնքման պայմանագրով և Արդարադատության նախարարությունը Էլեկտրական Էներգիայի ինստիտուտի համար կնքված պայմանագրերով:

Ըստ պայմանագրերի քանակի ամենախոշոր ծախսային ուղղությունները կապի, անշարժ գույքի վարձակալման և համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման և սպասարկման ծառայությունների համար կնքված պայմանագրերն են, որոնց խոշորագույն մատակարար կողմերի ուսումնասիրությունը կրկնում է 2016թ.-ի պատկերը:

Երկրորդ եռամսյակի խոշորագույն պատվիրատուները հիմնականում տպագրական աշխատանքների պատվիրատուներն են, հանձնիս ՀՀ ԿԳՆ-ի և Սփյուռքի նախարարության: ՀՀ ՊՆ-ի պայմանագրային գինը պայմանաորված է եռամսյակի խոշորագույն 650 մլն դրամ արժողությամբ պայմանագրով՝ կնքված Ռադվան Տեխնոլոգիայի հետ վարժասարքերի ձեռքբերման համար:

Սոնտորինգի արդյունքում վեր հանված կասկածելի կոռուպցիոն ռիսկայնությունն պարունակող պայմանագրերը

✚ Մեկ անձից կատարված գնումներում ամենատարածվածը մինչև բազային միավորը՝ 1,000,000 ՀՀ դրամը, պայմանագրային գնով կնքված պայմանագրեր են, որոնց թիվը հասնում է 2472-ի, և որպես գնման իրականացման հիմք նշվում է ՀՀ Կառավարության 10.02.2011թ.-ի թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 2-րդ ենթակետը: Այստեղ հարկ է նշել, որ երբեմն նույն ընկերության հետ նույն ժամանակահատվածում կնքում են մեկից ավելի պայմանագրեր բազային միավորը չգերազանցելու համար: Օրինակ՝ Կառավարության աշխատակազմը 2016թ. դեկտեմբեր ամսվա մեջ 840, 648 և 825 հազարական դրամ պայմանագրային գներով երեք պայմանագրեր է կնքել «Ակտիս» ՍՊԸ-ի հետ գրառումների տեսրեր գնելու համար: Մեկ այլ օրինակ կարող է լինել ՀՀ ԱԺ-ի և Կարեն Զոսոյան ԱԶ-ի միջև կնքված նույն ամսում բազային միավորից ցածր մեկից ավելի կնքված պայմանագրերը:

✚ ՀՀ ԿԳՆ-ի և «Անդին Ա» ՍՊԸ-ի միջև կնքված 25 մլն դրամ արժողությամբ պարբերական մամուլի ձեռքբերման պայմանագիրն է, ինչպես 2017թ., այնպես էլ 2015-ին և 2016-ին:

✚ Խոշորագույն վարձակալ «Հանարդնախագիծ» ՓԲԸ-ի անշարժ գույքի վարձակալման պայմանագրերը 2016թ. և 2017թ.-ին պետական մարմինների հետ, մասնավորապես 2017թ. խոշորագույն Պետական գույքի կառավարման վարչության, որի հետ կնքել է 3 պայմանագիր 148 մլն դրամ ընդհանուր արժողությամբ:


✚ Մեկ այլ լուրջ հիմնախնդիրն այն է, որ մեկ անձից գնման պայմանագրերի շատ մեծ թվով դեպքերում բացակայում է գնման այս ոչ մրցակցային ընթացակարգի կիրառման պատճառաբանված հիմնավորումը: Մասնավորապես, ԹԻՀԿ-ի կողմից ընտրված՝ կառավարության կողմից գնման գործընթաց կազմակերպելու մասին 2017թ.-ին ընդունված 7 որոշումներից միայն 2-ում առկա էր այնպիսի գործընթաց անցկացնելու պատճառաբանված հիմնավորումը: **Հավելված 5**-ում ամփոփ ներկայացված է այդ որոշումների ընդունման պաշտոնապես բերված անհրաժեշտությունը և ԹԻՀԿ-ի գնահատականը, թե այդ անհրաժեշտության նկարագրության մեջ ներառված է գնման ոչ մրցակցային ձևի պատճառաբանված հիմնավորումը:

Բողոքարկման համակարգի մոնիտորինգ

Բողոքարկման համակարգի մոնիտորինգի համար տվյալներ համավաքագրվել են ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am կայքի «Բողոքարկում» բաժնում Ներկայացված բողոքների վերաբերյալ հայտարարությունների և Բողոքների վերաբերյալ կայացած որոշումներ կայացած որոշումների ենթաբաժիններում հրապարակված տվյալներից:

2017թ. 1-ին եռամսյակում ստացվել է 41 բողոք, որը նախորդ տարվա վերջին եռամսյակի հետ համեմատած (23 բողոք) աճել է կրկնակի:

Գրաֆիկ 1.




Ըստ gnumner.am կայքի հրապարակված տվյալների 2016թ. ստացվել է 134 բողոք, որոնց գրեթե կեսը մերժվել է, ստացված 133 բողոքից բավարարվել է 42-ը, իսկ 7 բողոքի հետ կապված ոչ մի որոշում հրապարակված չի կայքում: Նշված 133 բողոքների 22%-ը ուղղված է եղել ՀՀ ՊՆ-ի հայտարարված գնում կատարելու ընթացակարգերին, իսկ բողոքարկվող ընթացակարգերում 29 բողոքներից 22-ը բաժին են հասնում շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերի դեմ բողոքները:

Ուսումնասիրելով ամենահաճախ բողոք ստացած մարմինների դեմ բողոքները՝ նկատում ենք, որ ՀՀ ՊՆ-ին ուղղված բողոքների մեծամասնությունը՝ 34.5%-ը, Երևանի քաղաքապետարանի դեպքում մերժվել են կեսից ավելի բողոքները, իսկ «Նորթ-Մարաշ» ԲԿ-ի դեմ բողոքները մերժումներ չունեն:

Գրաֆիկ 2.

Բողոքարկման խորհրդի որոշումների վիճակագրությունը ըստ տարիների



2017թ. 41 բողոք ստացած պատվիրատուների թիվը 27-ն է, իսկ բողոքող ընկերությունների թիվը հասնում է 38-ի:

2017թ. 1-ին եռամսյակում ևս ամենահաճախ բողոքներ ստացած գնումների ընթացակարգերի պատվիրատուն ՀՀ ՊՆ-ն ու Երևանի քաղաքապետարանն են:

ՀՀ ՊՆ-ի 7 բողոքներից 4-ը բավարարվել են, 2-ը մերժվել, իսկ մեկի մասին կայացրած որոշում կայքում չկա: Երևանի քաղաքապետարանի դեպքում 5 բողոքից 3-ը բավարարվել են, 1-ը մերժվել, մյուսը բավարարվել է մասնակի:

Հավելված 6-ում ներկայացված են տվյալներ 2017թ. ընթացքում գնումների բողոքարկման խորհրդի (ԳԲԽ) կողմից ընդունված որոշումների, գնումների մասնակիցների կողմից պետական լիազոր մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից այդ մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում («սև» ցուցակ) ներառելու նպատակով ԳԲԽ ներկայացված բողոքների, ինչպես նաև դրանց բաշխվածությունն ըստ ներկա ԳԲԽ անդամների:

Օրենքի շրջանակներում (գործողության ոլորտում) կազմակերպված ընթացակարգերի ընտրանքային կարգով ուսումնասիրություն

Մոնիտորինգային ծրագրով նախատեսվում էր ընտրանքային կարգով ուսումնասիրել Օրենքի շրջանակներում (գործողության ոլորտում) կազմակերպված ընթացակարգերի Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի և Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխանությունը *(Այն է գնումների գործընթացում գնման առարկայի բնութագրերի միջակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացման դեպքերի բացահայտում և մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշների առկայության բացահայտում, որոնք՝*

ա. նախատեսված չեն օրենքով.

բ. խտրական են և սահմանափակում են միջակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

Համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից)

Առաջին իսկ բացահայտված խախտման դեպքով ահազանգ է կատարվել և փորձ արվել կանխել օրենքի խախտումը, զանգահարելով թեժ գիծ ծառայություն, սակայն պարզվել է, որ ընդունված ահազանգին որևէ ընթացք չի տրվելու, քանի որ ահազանգի ընդունման և համապատասխան գործողությունների ընթացակարգը դեռևս կանոնակարգված չէ լիազորված մարմնի կողմից:

Ստորև ներկայացված են ԹԻՅԿ-ի կողմից կատարված ընտրանքի շրջանակներում առանձնացված ընթացակարգերը, որոնցում տեղ է գտել օրենքի վերոնշյալ հոդվածների խախտումը:

Աղյուսակ 5. Գնման մի շարք ընթացակարգերի ընտրանքային ուսումնասիրության արդյունքները

Պատվիրատու	Ընթացակարգի ծածկագիրը	Գնման առարկան	Խախտում	Մասնակից
Երևանի քաղաքապետարան	ԵԲ-ԳՀԱՊՁԲ-17/1	Մարդատար ավտոմեքենաներ	Տեխնիկապարզում է նկարագրվում է կոնկրետ մակնիշի ավտոմեքենա	Մեկ մասնակից ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ ՍՊԸ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտե	ՀՀ ՏՁՆՆ-ԳՀԾՁԲ-17/5	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	Գնային առաջարկը ներկայցվում է կատալոգով	Մեկ մասնակից Գարանտուերվ իս ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ ՖՆ ԳՀԱՊՁԲ-17/3	Տեխնիկա և գրասենյակային գույք	Սահմանափակող տեխ նկարագիր	Մեկ մասնակից 12-րդ

			12-րդ չափաբաժնում	չափաբաժնում Սմարթլայն ՍՊԸ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտե	ՀՀ ՏՁՆՆ-ԳՀԾՁԲ- 17/4	Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	Գնային առաջարկը ներկայցվում է կատալոգով	Երեք մասնակից՝ ընտրված Բևեռային ուղի ՍՊԸ
ՀՀ ԿԱ Ոստիկանություն	ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ- 2017-ՀՈՍՊ/ԲՍ	Բժշկական սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ	Գնային առաջարկը ներկայցվում է կատալոգով	Մեկ մասնակից Ա/Ձ ՀՌԻՓՍԻՄԵ ՀԱԿՈԲՅԱՆ
«Զվարթնոց» ավիաօթերևութաբ անական կենտրոն» ՓԲԸ	ԶԱՕԿ-ԳՀԾՁԲ- 09/17	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	Գնային առաջարկը ներկայցվում է կատալոգով	Մեկ մասնակից Մ ԲԻ Ռ ՍՊԸ
Երևանի քաղաքապետարան	ԵԲ-ԳՀԾՁԲ-17/11	Միջոցառումների կազմակերպման ծառայություններ	Տեխնիկական բնութագիրը սահմանափակում է հնարավոր մասնակցությունը և պարունակում է անորոշ պահանջներ	Մեկ մասնակից ԴԱՎԻԹ - Դ.Վ.Ս. ՍՊԸ
ՀՀ ԿԱ ոստիկանություն	ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ- ԱՎՏՈ/2017-1	Ավտոմեքենաներ	Տեխնութագրով նկարագրվում է կոնկրետ մակնիշի ավտոմեքենա	Չկայացած
ՀՀ ԿԱ ոստիկանություն	ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ- 2017-ԱՎՏՈ/7-2	Ավտոմեքենաներ	Տեխնութագրով նկարագրվում է կոնկրետ մակնիշի ավտոմեքենա	Չափաբաժին 1,3՝ Մեզամոթորս ՍՊԸ, չափաբաժին 4՝ Մեզնա ՍՊԸ

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ	ԲԷՑ-ԲՄԱՊՁԲ- 17/33	Ավտոբուսների մատակարարման պայմանագիր	Տեխնութագրով նկարագրվում է կոնկրետ մակնիշի ավտոբուս, նախատեսվել է ակրեդիտիվի բացում	Ընթացիկ
ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿ ԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԱՆ ՔԿՎ- ԳՀԱՊՁԲ-17/4	Ավտոմեքենաներ	Տեխնութագրով նկարագրվում է կոնկրետ մակնիշի ավտոմեքենա	Առաջին չափաբաժնին՝ Մեզնա ՍՊԸ, երկրորդ չափաբաժնին՝ Մեզամոթորս ՍՊԸ
«Երևանտրանս» ՓԲԸ	ԵՏ-ԳՄԾՁԲ 4/17-3	Ավտոտեխ- սպասարկում	Թղթային է հայտարարվել, ցանկով	
«Երևանտրանս» ՓԲԸ	ԵՏ-ԳՄԱՊՁԲ-5/17- 6	Պահեստամասեր	Թղթային է հայտարարվել	
ՀՀ նստիկանության գործեր	ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԾՁԲ- 17/3/ԱԲ/2/ԱԾ	Ավտոտեխ- սպասարկում	Ցանկով	Միակ մասնակից Գարանտսերվ իս ՍՊԸ
'<<ՀԱԷԿ>> ՓԲԸ	ՀԱԷԿ- ԳՅԱՊՁԲ- 8/17	Ավտոտրանս- պորտային միջոցներ	Տեխնութագրով նկարագրվում է կոնկրետ մակնիշի ավտոմեքենա	Չկայացած
ՀՀ ԿԱ նստիկանություն	ՀՀ ԿԱ Ո ԲՄԱՊՁԲ- ԱՎՏՈ/2017-1	Ավտոմեքենաներ	Տեխնութագրով նկարագրվում է կոնկրետ մակնիշի ավտոմեքենա	Միակ մասնակից ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ ՍՊԸ
ՀՀ ԿԱ նստիկանություն	ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ- ԱՎՏՍԾ- 2017/ՊՊԳՎ	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	Ցանկով	Միակ մասնակից Գարանտսերվ իս ՍՊԸ
Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ	ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ- 17/36	Էլ. սարքերի և պահեստամասեր	Տեխնիկական բնութագիրը պարունակում է	Երկու մասնակից Չավեն Եղիազարյան

			սահմանափակումներ	Սերյոժայի ԱԶ և Լենուր ՍՊԸ
ՀՀ քննչական կոմիտե	ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-17/2	Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման – պահպանման ծառայություններ	Անորոշ նկարագիր մեկ չափաբաժնով	Միակ մասնակից Էլլիպս Ջի Էյ ՍՊԸ
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-17/1	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն	Ցանկով	Միակ մասնակից ՄԲԻՌ ՍՊԸ
ՀՀ ԿԱ ոստիկանություն	ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2017-ՊՊԳՎ+ԱՎՎ+ՃՈ /72	Ծրագրային սպասարկման, տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայություններ	gnumner.am կայքում հայտարարության վերնագիրը դրվել է Հ Ր Ա Վ Ե Ր Հ Հ ԿԱ Ո կարիքների համար գնանշման հարցման միջոցով շինարարական ապրանքների ձեռքբերման «ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ-2017-ՊՊԳՎ+ԱՎՎ+ՃՈ /72» ծածկագրով հայտարարություն և հրավեր	Միակ հայտը ներկայացրել է Բևեռային ուղի ՍՊԸ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2	Տրակտոր	Սահմանափակում պարունակող տեխնիկա	Երկու մասնակից՝ Հրաշք այգի ՍՊԸ և NAS General Trading LLC

Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/4	Մանկապարտեզի կահույք	Անորոշ բնութագիր 8-րդ չափաբաժնում	8-րդ չափաբաժնով 3 հայտ շատ տարբեր գներով
Առափիի համայնքապետարան	ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-17/01	Ավտոմեքենա	«Լեքսուս» մակնիշի ավտոմեքենա	Տեղեկությունները բացակայում են
«Հումանիտարական ազդերժման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ	ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-17/2	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն	Ցանկով	Ընթացիկ
Երևանի քաղաքապետարան	ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/2	Կոնյակ հորեյանական 500 շիշ 0,75լ		Միակ մասնակից Երևանի կոնյակի գործարան
ՀՀ բնապահպանության նախարարության Զանգեզուր կենտրոնային համայնքի ՊՈԱԿ	«ԶԿ-ԳՀԾՁԲ-17/01-Ա»	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն	Ցանկով	միակ մասնակից ԱԶ Արծվիկ Առաքելյան
Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ	ԵՐԶԷԿ ԳՀԱՇՁԲ 20/17	Օդորակիչների սպասարկում	Ցանկով	Երկու մասնակից, ընթացիկ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20/3	Ականոսիչների վերանորոգում	Ցանկով	Միակ մասնակից Էլեկտրոն ԲԲԸ
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ	ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-17/10	Համակարգիչներ	2-րդ չափաբաժնում նկարագրվում է կոնկրետ ապրանքային նշանի համակարգիչ	Երկրորդ չափաբաժնով ընտրված մասնակից Կոմպմարկետ ՍՊԸ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/12»	Վերելակների և օդափոխության համակարգերի սպասարկում	Ցանկով	Չկայացած

ՀՀ ոստիկանություն	ՀՀ ԿԱ Ո ԳՀԾՁԲ- 2017- ՊՊԳՎ+ԱՎՎ+Կ/7	Սպասարկման խառը ծառայություններ	Ցանկով	Չափաբաժին- ների մեծ մասը հայտարարվել չկայացած՝ հայտեր ներկայացված չլինելու պատճառով
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Ե-Հ	Հանդերձանքի և անկողնային պարագաների կենտրոնացված գնում	Մասնագիտական փորձառություն է պահանջվում հանդերձանքի և անկողնային պարագաների (միաժամանակ) մատակարարման փորձառություն, մատակարարման ժամկետ ըստ պատվիրատուի պահանջի	Ընթացիկ
	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Շ-Հ			Ընթացիկ
	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Տ-Հ			Ընթացիկ
	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Գ-Հ			Ընթացիկ
	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Կ-Հ			Ընթացիկ
	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Լ-Հ			Ընթացիկ
	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Ս-Հ			Ընթացիկ
	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Ա-Հ			ընթացիկ
	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Ե-Տ	Տնտեսական, սանհիգիենիկ և մաքրող նյութերի կենտրոնացված գնում	Մասնագիտական փորձառություն է պահանջվում տնտեսական, սանհիգիենիկ և մաքրող նյութերի (միաժամանակ) մատակարարված	Ընթացիկ
	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Շ-Տ			Ընթացիկ
	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Տ-Տ			Ընթացիկ
	ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Գ-Տ			Ընթացիկ

ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Կ-Տ	լինելը, մատակարարման ժամկետ ըստ պատվիրատուի պահանջի	Ընթացիկ
ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Լ-Տ		Ընթացիկ
ԱՍՀՆ-ՊՈԱԿ- ԳՀԱՊՁԲ-17/3-Ս-Տ		Ընթացիկ

Հավելված 1

Առաջարկություններ եվ դիտողություններ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Որոշման 2-րդ կետով լիազորվում է ՀՀ ֆինանսների նախարարին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված քսանօրյա ժամկետում հաստատել փակ պարբերական մրցույթով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակ:

Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի դրույթները, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրության ամբողջությունը կազմող իրավական ակտերի թիվը կրճատելու նպատակով, առաջարկում ենք տվյալ ցուցակը սահմանել սույն որոշմանը կից հավելվածով:

Ընդունվել է՝ փակ պարբերական մրցույթներով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը սահմանվել է N 2 հավելվածով, սակայն տվյալ հավելվածը չի դրվել հանրային քննարկման և ցուցակում ներառվել են ապրանքներ, որոնց ձեռքբերումը չի կարող պարունակել պետական գաղտնիք (ծաղիկներ, նարդի, շախմատ, կոշիկի խոզանակներ և այլն, ամբողջ ցանկը տես հավելված-ում): «Գնումների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն փակ մրցույթը կիրառվում է, եթե գնման գործընթացը պարունակում է պետական գաղտնիք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն Փակ մրցույթը պարբերական է, եթե գնման առարկան ձեռք է բերվում պարբերաբար, և այն ներառված է սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում:

Հարց է առաջանում. իսկ ո՞րն է տվյալ գնումների պետական գաղտնիքը:

2. Որոշման հավելված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) II և III բաժիններով սահմանվում են գնման գործընթացը և գնման գործընթացի պատասխանատուները, նրանց լիազորությունները, իրավունքները և պարտականությունները, մինչդեռ Օրենքով տվյալ հարցը կարգավորված չէ:

06.12.2015թ-ին ընդունված ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:*

06.12.2015թ-ին ընդունված ՀՀ սահմանադրության 39- րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ *մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:*

Հաշվի առնելով ՀՀ սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջները, առաջարկում ենք Կարգի II և III բաժիններով նախատեսված դրույթները սահմանել «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք):

Բացի այդ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն:*

Այս կապակցությամբ առաջարկում ենք գնման գործընթացի պատասխանատուների կողմից Օրենքը խախտելու համար սահմանել քրեական և վարչական պատասխանատվություն՝

համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքում և ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում նախատեսված կոնկրետ դրույթներ :

Չի ընդունվել:

3. Կարգի 18-րդ կետով սահմանվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան արտացոլելու պայմաններ:

Առաջարկում ենք սույն կետով նախատեսված դրույթները տեղափոխել «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մեջ: Իսկ տվյալ կետով սահմանել ֆինանսական միջոցներ հատկացվելու ուղղությամբ այն պարտադիր և հրապարակային գործողությունները, որոնք պատվիրատուն պարտավոր է կատարել Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն պայմանագիր կնքվելու դեպքում:

Չի ընդունվել:

4. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով տրված է հետևյալ սահմանումը. գնման գին՝ ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինը:

Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը կազմակերպելիս՝ օրենքի 3-րդ բաժնով նախատեսված պայմաններից բացի պետք է հաշվի առնել, որ՝

1) գնման գինը գնումների պլանով նախատեսված՝ գնումների միասնական անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն է.

Փաստորեն տվյալ սահմանումը ցույց է տալիս, թե ինչպես պետք է հաշվարկել նախահաշվային գինը: Հաշվի առնելով տվյալ սահմանման կարևորությունը գնումների գործընթացում՝ այն հստակեցման խիստ կարիք ունի, քանի որ պարզ չէ, թե ինչի մասին է խոսքը և երկակի մեկնաբանության տեղիք է տալիս:

Գնման գին հասկացության օգտագործվում է Օրենքի մի շարք հոդվածներում, արդյոք տվյալ սահմանումը կիրառելի է նաև բոլոր այդ հոդվածների համար (Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մաս, Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մաս, Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մաս, Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մաս Օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մաս, Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մաս, Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ, Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետ, Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետ, Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մաս):

Բացի դրանից Կարգի 23-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ *գնման ընթացակարգը կազմակերպելիս՝ օրենքի 3-րդ բաժնով նախատեսված պայմաններից բացի պետք է հաշվի առնել, որ եթե գնումների միասնական անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերում ներառված՝ վերջնական սպառման ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասուննապատիկը, ապա գնման առարկայի ձեռքբերումը կարող է իրականացվել գնանշման հարցման ձևով, պայմանով, որ այն չպետք է ներառված լինի էլեկտրոնային աճուրդով կամ կենտրոնացված եղանակով կամ փակ պարբերական մրցույթով իրականացվող գնումների ցուցակում.*

Նշված ենթակետը հակասում է «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հավելված 3-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետին, քանի որ վերջինիս համաձայն՝ *3-րդ սյունակում լրացվում է գնման ձևը: Ընդ որում, գնման ձևը լրացնելիս հաշվի է առնվում, որ գնման գինը անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն է.*

Առաջարկում ենք գնման գին հասկացությունը Օրենքում օգտագործված բոլոր հոդվածների համար սահմանել պարզ և հստակ, առանց երկակի մեկնաբանության տեղիք տալու, ինչպես նաև

գնանշման հարցման ձևի ընտրության հետ կապված գնման գին հասկացության առանձնահատկությունը սահմանել նաև «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով:

Չի ընդունվել: և «գնման գին» սահմանումը ընդհանրապես հանվել է կարգից

5. Գտնում ենք, որ Կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակում բերված որոշ գնումների վրա չի կարող տարածվել Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ պայմանավորված դրույթը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

ա. Կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 3-րդ տողը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «*ռոռզման, խմելու (խողովակաշարերով), տեխնիկական և արդյունաբերական ջրի մատակարարում*»: **Ընդունվել է:**

բ. 20-րդ տողը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «*գնման առարկայի ձեռքբերման պայմանագրով նախատեսված դեպքերում գնման առարկան արտադրած կամ վերջինիս միակ ներկայացուցիչ հանդիսացող անձից գնման առարկայի տեխնիկական սպասարկման ծառայությունների և սպասարկման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում՝ երաշխիքային սպասարկման ժամկետի ընթացքում*»: **Չի ընդունվել:**

գ. 8, 9, 11-13 և 15 տողերը հանել ցանկից:

դ. Առաջարկում ենք 8, 9, 11, 12 տողերով նախատեսված պետական և համայնքային կազմակերպություններից ոչ թե գնում կատարել, այլ կատարվող ծախսերը փոխհատուցելու նպատակով գումարները տրամադրել դրամաշնորհային ծրագրերի (սուբսիդիաների) միջոցով, իսկ տվյալ տողերով նախատեսված գնումները մասնավոր հատվածի կազմակերպություններից իրականացնել ոչ թե մեկ անձից գնում կատարելու միջոցով, այլ մրցակցային եղանակով: Այսպիսի մոտեցումը կհստակեցնի ոչ միայն մեկ անձից կատարվող գնումների վիճակագրական ցուցանիշները, այլև կնպաստի մրցակցության խթանմանը, ինչը բխում է Օրենքի 3-րդ հոդվածի պահանջներից: Արդյունքում կապահովվի գնումների թափանցիկությունը և կբարձրանա մատուցվող ծառայությունների որակը, ինպես նաև նման կարգավորումը կնպաստի ՀՀ նոր ներդրումներ ներգրավելուն:

Առաջարկությունը ընդունվել է մասնակի՝ «8. երաժշտական դպրոցների ուսուցում», «9. հեռակա դպրոցների ուսուցում», «15. անվճարունակության (սնանկության) գործերի կառավարիչների ծառայություն» տողերը հանվել են ցանկից: Ցանկից չի հանվել «11. հիվանդանոցային բուժօգնություն՝ ներառյալ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ», «12. ամբուլատոր պոլիկլինիկական բուժօգնությունը» տողերը:

ե. Տող 13-հիգիենիկ հակահամաճարակային ծառայության ձեռքբերումը մեկ անձից հակասում է Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, քանի որ բացակայում է հեղինակային և հարակից իրավունքները, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությունը և պետք է կազմակերպել մրցակցային ձևով գնում: **Ընդունվել է:** «13. հիգիենիկ հակահամաճարակային ծառայություն» տողը հանվել է ցանկից:

զ. 5 և 17 տողերով նշված գնումները չեն համապատասխանում Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, քանի որ բացակայում է հեղինակային և հարակից իրավունքները, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությունը: Տվյալ գնումները պարունակում են պետական գաղտնիք, ինչն էլ հիմք է հանդիսանում, որ դրանք իրականացվեն Օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված է փակ մրցույթ կիրառելու միջոցով: Ելնելով դրանից, առաջարկում ենք նաև ցանկից հանել 5 և 17 տողերը: **Չի ընդունվել:**

է. Առաջարկում ենք Կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի ցանկում ներառել նաև հետևյալ ապրանքները, աշխատանքները և ծառայություններ՝

• Մշակութային արժեքների, այդ թվում՝ թանգարանային իրերի և թանգարանային հավաքածուների, ինչպես նաև հազվագյուտ և արժեքավոր հրատարակումների, ձեռագրերի, արխիվային փաստաթղթերի ձեռքբերումը՝ ներառյալ պատմական, գեղարվեստական կամ այլ մշակութային նշանակություն ունեցող օրինակները, որոնք նախատեսված են պետական թանգարանային, գրադարանային, արխիվային հիմնադրամների, կինո-, լուսանկարչական հիմնադրամների և այլ նմանատիպ հիմնադրամների համալրման համար: **Չի ընդունվել:**

• Որոշակի պարբերականների և էլեկտրոնային հրատարակումների բաժանորդագրումը, ինչպես նաև որոշակի հեղինակների տպագիր և էլեկտրոնային հրատարակումների գնումը, էլեկտրոնային հրատարակումներին մուտքի ապահովման գծով ծառայությունների ձեռքբերումը՝ նման տպագիր և էլեկտրոնային հրատարակությունների հրատարակիչների կողմից, պետական և համայնքային կրթական հիմնարկների, պետական և համայնքային գրադարանների, պետական գիտական կազմակերպությունների գործունեությունն ապահովելու նպատակով, այն դեպքում, եթե նշված հրատարակիչներին են պատկանում նման հրատարակություններն օգտագործելու բացառիկ իրավունքները: **Չի ընդունվել:** Ցանկից հանվել է նաև «7.տպագիր կամ էլեկտրոնային հրատարակումների, զանգվածային լրատվության միջոցների ձեռքբերում՝ բացառությամբ հեռուստառադիոհաղորդումների և թերթերի» տողը

• Կենդանաբանական այգու, թատրոնի, կինոթատրոնի, համերգի, կրկեսի, թանգարանի, ցուցահանդեսի և սպորտային միջոցառումների մասնակցության մուտքի տոմսերի և բաժանորդագրերի, թատերատեսարանային, մշակութալուսավորչական ու տեսա-զվարճալի միջոցառումների մասնակցության, էքսկուրսիոն տոմսերի և ուղեգրերի ձեռքբերում: **Չի ընդունվել:**

• Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում օպերատիվ-հետախուզական, քննչական գործունեություն իրականացնելու համար՝ դրանք իրականացնող իրավասու մարմինների կողմից, օրենքով նախատեսված պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման, ինչպես նաև անհրաժեշտ գիտատեխնիկական կամ այլ հատուկ գիտելիքներով պաշտոնատար անձանց ու մասնագետների ծառայությունների կատարման համար: **Չի ընդունվել:**

• Մտավոր սեփականության առարկա հանդիսացող ապրանքների և ծառայությունների ձեռքբերում այն անձանցից, որոնք ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների նկատմամբ ունեն բացառիկ իրավունքներ: **Չի ընդունվել:**

6. Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետը լացնել հետևյալ բովանդակությամբ՝

«Նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, մասնակիցները ևս իրավունք ունեն տեսաձայնագրել կամ ձայնագրել նիստերը՝ բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, այդ մասին համապատասխան հայտարարություն անելուց հետո:

Յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը, որի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է»:

Նման դրույթի նախատեսումը կապահովի Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված գնման գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը, արդյունքում կվերանան կամ նվազագույնի կհասցվեն գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների օրինական իրավունքների ոտնահարման դեպքերը:

Չի ընդունվել: չնայած այն հանգամանքին, որ քննարկման ժամանակ տրամադրված տեղեկանքում և բանավոր զրույցում հավաստել են, որ առաջարկության առաջին մասը ներառվել է նախագծում, իսկ երկրորդ մասը արդեն իսկ կարգավորված է նախագծով:

7. Կարգի 31-րդ կետը առաջարկում ենք ձևակերպել հետևյալ բովանդակությամբ. «*Գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը*

հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝

1) գնումների կամ նախարարական հայտարարության տեքստը, որը սույն Կարգի 23-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի ընտրության դեպքում ներառում է ընթացակարգի ընտրության պատճառարանված հիմնավորումը:

2) հրավերի տեքստը, որը բացառությամբ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարելու դեպքի, ներառում է գնումների պլանով յուրաքանչյուր չափաբաժնի համար նախատեսված նախահաշվային գինը,

3) հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը»:

Գործնականում պատվիրատուները, օգտվելով այն հանգամանքից, որ Օրենքով և Կարգով իրենց մեկ անձից գնում կատարելու հնարավորություն է ընձեռված, հաճախ թույլ են տալիս չարաշահումներ և առանց հիմնավորման կիրառում են գնման տվյալ ձևը, ինչի արդյունքում խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի պահանջները: Նաև, տեղին է հրավերով սահմանել նախահաշվային առավելագույն գները և կարգով ու հրավերով նախատեսել նախահաշվային գները գերազանցող հայտերը անմիջապես մերժելու դրույթ:

Չի ընդունվել

8. Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ծանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ապրանքի ամբողջական նկարագիրը պետք է պարունակի ապրանքի ֆիրմային անվանման (բրենդի), արտադրողի անվանման, ծագման երկրի, ապրանքի տեխնիկական բնութագրի վերաբերյալ տեղեկություններ, ապրանքի լուսանկար և որակի սերտիֆիկատի պատճեն (եթե սերտիֆիկատի առկայությունը պահանջվել է հրավերով)»:

Նման պայմանի նախատեսման դեպքում ապրանքն ընդունելու ժամանակ պատվիրատուն հնարավորություն կունենա պարզելու մատակարարված ապրանքը համապատասխանում է կնքված պայմանագրով նախատեսված ապրանքին, թե ոչ: Բացի այդ կկանխվի մատակարարների կողմից ավելի ցածր որակով ապրանքների մատակարարումը: Գործնականում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ մատակարարները ներկայացնում են հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրի տառացի կրկնօրինակը, սակայն իրականում մատակարարում են այլ, ավելի ցածր որակի և գնի ապրանք:

Առաջարկի ընդունման դեպքում, ոչ միայն կկանխվի այդ արատավոր երևույթը, այլև ընթացակարգին մասնակցած մյուս մասնակիցները հնարավորություն կունենան վերահսկելու արդյոք մատակարարվելու է հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանք:

Տվյալ առաջարկը ընդունվելու դեպքում Կարգի 32-րդ կետի 4-րդ, 12-րդ ենթակետերում, Կարգի 50-րդ կետում և 70-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, 2-րդ ենթակետի «գ» պարբերության մեջ ապրանքի անվանում և տեխնիկական բնութագրի բառակապակցությունը փոխարինել ապրանքի ամբողջական նկարագիր բառակապակցությամբ, իսկ Կարգի 111-րդ կետի 1-ին ենթակետում (ներառյալ գրավոր եզրակացության պատճենը) նախադասությունը ձևակերպել հետևյալ բովանդակությամբ. «ներառյալ գրավոր եզրակացության և սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված ապրանքի ամբողջական նկարագրի պատճենը»

Ընդունվել է մասնակի Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)»:

Կարգի 111-րդ կետի 1-ին ենթակետի վերջին նախադասությունը լրացվել է հետևյալ բովանդակությամբ. «իսկ մատակարարված ապրանքների պահեստ մուտքագրումը պահեստի պատասխանատուն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված արձանագրության պատճենի (ներառյալ գրավոր եզրակացության), իսկ ապրանքների գնման դեպքում նաև ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի, պատճենի հիման վրա, որը վերջինիս տրամադրվում է դրա կազմման օրը»

Չի ներառվել ապրանքի լուսանկարի և որակի սերտիֆիկատի պատճեն ներկայացնելու պահանջը:

9. Կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետը շարադրել է հետևյալ բովանդակությամբ. «ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում, որը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, հաստատվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում:»

Չի ընդունվել

10. Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետը լրացնել է հետևյալ բովանդակությամբ. «Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջ ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում է բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարել դրանք և վերադարձնում է քարտուղարին սիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժաղովի բնականոն գործունեությանը:»

Ընդունվել է:

11. Կարգի 33-րդ կետի 15-րդ ենթակետը լրացնել է հետևյալ բովանդակության արտահայտությամբ.

«Բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների՝ պատվիրատուի կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը, ինչպես նաև պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող երկկողմ հաստատված փաստաթուղթը նույն օրը պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում:»

Չի ընդունվել

12. Կարգի 39-րդ կետը լրացնել է հետևյալ բովանդակությամբ.

«Չայտերը մասնակցի կողմից առձեռն հանձնելու դեպքում քարտուղարը պարտավոր է ստուգել ծրարի՝ հրավերով նախատեսված պահանջներին համապատասխան կազմված լինելը և անհամապատասխանությունը հայտնաբերելու դեպքում մատնանշել դրանք: Անկախ մասնակցի կողմից անհամապատասխանությունը շտկելու կամ չշտկելու հանգամանքից՝ քարտուղարը պարտավոր է ընդունել ծրարը: Մասնակիցները իրավունք ունեն տեսաձայնագրել կամ ձայնագրել ծրարի հանձնման և ընդունման ընթացքը, այդ մասին համապատասխան հայտարարություն անելուց հետո:»

Չի ընդունվել

13. Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների նախահաշվային գինը`

ա. հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով վերանայված գնային առաջարկներ ներկայացնելու օրվա, ժամի և տևողության մասին,

բ. վերանայված գնային առաջարկների ընդունումը իրականացվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը,

գ. որպես մեկնարկային գին սահմանվում է տվյալ գնումը կատարելու համար սահմանված նախահաշվային գինը,

դ. վերանայված գնային առաջարկների ընդունման ընթացակարգը անցկացվում է էլեկտրոնային աճուրդի անցկացման ընդհանուր կարգով»:

Եթե առաջարկվող կարգավորումը ընդունելի չէ ապա անհրաժեշտ է սահմանել վերանայված գնային առաջարկների գրավոր ներկայացման հստակ կանոնակարգված ընթացակարգ, որը կբացառի բոլոր տեսակի կոռուպցիոն ռիսկերը:

Չի ընդունվել

14. Կարգի 45-րդ կետով անհրաժեշտ է սահմանել նաև լիազորված մարմնի կողմից ստացված տեղեկությունների մշակման և դրանց մասով կոնկրետ գործողությունների կատարման սպառիչ ցանկ, ինչպես նաև դրանց կատարման հստակ ժամկետներ:

Ընդունվել է. Կարգի 45-րդ կետի առաջին նախադասությունը ձևակերպվել է հետևյալ բովանդակությամբ՝ «45. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները` համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին»:

15. Կարգի 58-րդ կետի համաձայն՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը վերաբերվում է այն դեպքին, երբ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

Նշված կետը պարունակում է բավականին մեծ կոռուպցիոն ռիսկեր, քանի որ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա գնման ընթացակարգը չկայացած հայտարարվի զուտ այն պատճառով, որ հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած կամ ընտրված մասնակից ճանաչվի պատվիրատուի համար ոչ ցանկալի մատակարար: Ուստի նման դեպքերից խուսափելու համար անհրաժեշտ է, որպեսզի գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու վերաբերյալ որոշումները լինեն հիմնավորված և պատճառաբանված, ինչպես նաև կայացվեն ոչ թե համայնքի ղեկավարի կողմից միանձնյա, այլ համայնքի ավագանու կողմից՝ կոլեգիալության սկզբունքով, քանի որ հենց համայնքի ավագանին է հասատում համայնքի բյուջեն: Բացի այդ անհրաժեշտ է

նաև հստակ սահմանել այն դեպքերը, որոնց առկայության պարագայում պատվիրատուն կարող է փաստել, որ գնման պահանջը վերացել է: Ինչպես նաև անհրաժեշտ է նախատեսել նման որոշում կայացնելու դեպքում մասնակիցների ընթացակարգին մասնակցելու համար կատարված ծախսերի հատուցման պայմաններ:

Ընդունվել է: Կարգի 58-րդ կետը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «58. Եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ: Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա»:

16. Կարգի 61-րդ կետը հակասում է Օրենքով նախատեսված մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքներին: Ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման փորձառության հիմնավորման համար նման ընդհանուր չափանիշի սահմանումը անտրամաբանական է և հիմնված չլինելով համապատասխան շուկաների ուսումնասիրության արդյունքների վրա, սահմանափակում է մրցակցությունը, որի արդյունքում պատվիրատուն հնարավորություն չի ունենում պայմանագիր կնքել ավելի ցածր գին առաջարկող հնարավոր մասնակցի հետ, ինչի հետևանքով վնասներ է կրում պետությունը:

Նշված կետով նախատեսված են պայմաններ, որոնց կիրառման դեպքում խիստ սահմանափակվում է նոր մասնակիցների՝ գնումների գործընթացում ներգրավման հնարավորությունը, քանի որ ՀՀ-ի սահմանափակ շուկայի առկայության պայմաններում գործնականում բազմաթիվ դեպքերում հնարավոր չէ ապահովել մասնագիտական փորձառություն համարվող նախկինում կատարված համանման պայմանագրերի առկայություն, այդ թվում պայմանագրերից մեկի արժեքի մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի 20 տոկոսից պակաս չլինելու պայմանը: Այս չափանիշին համապատասխանող հնարավոր մասնակից կարող է հանդիսանալ նախկինում պետական կարիքների բավարարման համար համապատասխան պայմանագրի կողմ հանդիսացած մատակարարը: Նման մոտեցման արդյունքում ժամանակի ընթացքում ՀՀ շուկան մոնոպոլիզացվել է, իսկ մրցակցությունը՝ գրեթե վերացել:

ՀՀ-ում առկա են մի շարք շուկաներ, որոնցից պետության համար առավել նպաստավոր պայմաններով առանց վերավաճառող միջնորդների գնում կատարելու համար նախկինում կատարված պայմանագրերի տեսքով փորձառության պահանջն առհասարակ անտրամաբանական է: Օրինակ՝ գյուղատնտեսական արտադրության ապրանքների (միրգ, բանջարեղեն, մսամթերք և այլն) ձեռքբերման նպատակով անցկացվող ընթացակարգերի դեպքում: Այստեղ սահմանափակվում է արտադրողի կողմից իր ապրանքը գյուղացիական կոոպերատիվների միջոցով (որի ներդրման ծրագիրը վաղուց գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում) մատչելի գնով անմիջապես վերջնական սպառողին հասցնելու հնարավորությունը:

Այս կապակցությամբ առաջարկում ենք վերանայել մասնագիտական փորձառության չափանիշները՝ տարանջատելով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շուկաները, ինչպես նաև, չանտեսելով նախկինում կատարված պայմանագրերը (իսկ այդ պայմանագրերի համար գումարային շեմեր սահմանել բացառիկ դեպքերի համար՝ օրինակ խոշոր շինարարական աշխատանքների դեպքում), նախատեսել մասնագիտական փորձառության հիմնավորման այլ եղանակներ: Հակառակ դեպքում ստացվում է, որ պետությունը հանդիսանում է ամենախոշոր սպառողը և վերջինիս հետ նախկինում պայմանագիր կնքած անձիք կարող են մասնակցել

պետության կարիքների համար հայտարարված ընթացակարգերին, որի հետևանքով բացառվում է նոր մատակարարների մասնակցության հնարավորությունը և Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված սկզբունքները դառնում են ձևական բնույթ կրող:

Չի ընդունվել՝ չնայած այն հանգամանքին, որ կառավարության նիստում այս հարցը բարձրացվեց նաև ՀՀ վարչապետի կողմից: Վարչապետը նշել է նաև, որ ՀՀ պաշտպանության և ՀՀ գյուղատնտեսության նախարարի հետ քննարկել են պաշտպանության նախարարության պահանջների համար գնումների հատուկ կարգ հաստատելու հարցը, որպեսզի մեր ֆերմերները կարողանան ուղղակիորեն մասնակցել այդ գործընթացին:⁴

17. Կարգի 65-րդ կետով նախատեսված համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերը հստակ չսահմանելու պարագայում բազմաթիվ չարաշահումների տեղիք է տալու, ինչի արդյունքում արհեստականորեն սահմանափակվելու է մրցակցությունը:

Անհրաժեշտ է այդ նպատակով կիրառել իրավական կարգավորում ստացած ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2013 թ-ի N 874-Ն հրամանի հավելվածով սահմանված տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը (ՀԴ-011-2013) կամ «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով սահմանված գնումների միասնական անվանացանկը, ինպես նաև սահմանել ընտրված դասակարգիչը կիրառելու հստակ մեխանիզմներ:

Չի ընդունվել՝ Ավելին, գործարքները համանման դասելու լիարժեք ազատություն է տրվել պատվիրատուին, չնայած այն հանգամանքին, որ քննարկման ժամանակ ընդունվել է որ տվյալ կետը ինդրահարույց է և հստակ կարգավորման կարիք ունի:

18. Կարգի 100-րդ կետի 1-ին ենթակետը հակասում է Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությանը, համաձայն որի՝ Լիազորված մարմինը չի կարող ներգրավվել գնման գործընթացներում, լինել պայմանագրի կողմ, բացառությամբ իր կարիքների համար իրականացվող գնումների:

Տվյալ ենթակետը հակասում է նաև Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի՝ Կենտրոնացված եղանակով գնումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կամ իրավաբանական անձի միջոցով:

Չի ընդունվել

19. Գնումների համակարգի արդյունավետությունը ապահովելու համար առաջարկում ենք ստեղծել առանձին գանձապետական հաշիվ՝ գնումների գործընթացում տնտեսված միջոցների կուտակման նպատակով:

Կարգի XVIII. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ բաժնում նախատեսել՝ Պետության կարիքների համար կատարվող գնման դիմաց վճարում կատարելու նպատակով կատարվող գործողությունների հետ զուգահեռ գնման տվյալ գործընթացում տնտեսված միջոցները պարտադիր կարգով տվյալ հաշվեհամարին փոխանցելու դրույթ:

Չի ընդունվել

20. Անհրաժեշտ է սույն Կարգով սահմանել սպասարկման ծառայությունների ձեռքբերման առանձնահատկություններ՝ մասնավորապես տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման, համակարգչային և ծայրամասային սարքավորումների սպասարկման և վերանորոգման, կենցաղային և գրասենյակային էլեկտրական սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման համար:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման նպատակով կազմակերպվող ընթացակարգերի մեծ մասում պատվիրատուների կողմից կոնկրետ տրանսպորտային միջոցի սպասարկումը և վերանորոգումը ընթացակարգի հրավերում նշվում է որպես մեկ չափաբաժին և

⁴ Տե՛ս՝ <http://www.gov.am/am/news/item/12965/>

առանձին հավելվածով ներկայացվում է հնարավոր բոլոր աշխատանքների և օգտագործվող պահեստամասերի ցանկը, իսկ մասնակիցների կողմից ներկայացվող գնային առաջարկը ձևավորվում է բոլոր հնարավոր աշխատանքների և օգտագործվող պահեստամասերի համար առաջարկվող ընդհանուր գնացուցակի հանրագումարից, որը մի քանի տասնյակ անգամ գերազանցում է նախահաշվային գները և անտեսելով այդ փաստը կնքվում է պայմանագիր: Բացի այդ գոյություն ունի մեծ կոռուպցիոն ռիսկ կապված այն հանգամանքի հետ, որ պատվիրատուների կողմից նախընտրած մասնակցին նախապես տրամադրվում է կատարվելիք աշխատանքների հստակ ցանկ, արդյունքում նրանց գնացուցակում այդ կոնկրետ տողերը նախատեսվում են մի քանի անգամ շուկայականից բարձր գներով, իսկ մնացած տողերով ընդհակառակը անտրամաբանական ցածր գներ, կամ ընդհանրապես գներ չեն նշվում: Արդյունքում նախընտրելի մասնակցի ընդհանուր գնային առաջարկը ստացվում է ամենացածրը, սակայն իրականում ձեռքբերումները կատարվում են շուկայականից մի քանի անգամ բարձր գներով:

Չի ընդունվել Չնայած այն հանգամանքին, որ քննարկման ժամանակ հավաստիացրել են, որ տեղյակ են տվյալ ինդրի մասին և փնտրում են լուծում:

21. Կարգում ներառված էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների առանձնահատկություններ պարունակող բոլոր դրույթները առաջարկում ենք տեղափոխել «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մեջ, քանի որ տվյալ դրույթները հանդիսանում են էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների առանձնահատկություն, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ իրավական ակտը պետք է լինի լիակատար, ավարտված և լիովին կարգավորի ակտով նախատեսված հարաբերությունների բոլոր առանձնահատկությունները:

Չի ընդունվել


22. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության համաձայն՝ իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի: 37-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի կառուցվածքը պետք է լինի կուռ՝ տրամաբանորեն միասնական, հաջորդական ու համակարգված:

Հաշվի առնելով վերը նշվածը գտնում ենք, որ տվյալ նախագիծը կազմված է բարդ և պատվիրատուների ու հնարավոր մասնակիցների համար դժվարամատչելի լեզվով, կառուցվածքը միասնական չէ, դրույթները հիմնականում հաջորդական ու համակարգված չեն, ինչը կխոչնդոտի Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված սկզբունքների իրագործմանը:

Չի ընդունվել

Հավելված 2.

Ֆայլերի բեռնման հետ կապված խնդրի օրինակ



Հավելված 3.

Որոնման համակարգի խնդրի օրինակ

← → ↻ Secure | https://armeps.am/ppcm/public/contracts

Ամփոփի հաշվետվություններ **Պայմանագրեր** Գնումների պլաններ Մանրամասն հաշվետվություններ ▼

Պայմանագրի ծածկագիրը:

Գնման առարկա:

Պատվիրատու:

Մատակարար:

Գնման ընթացակարգ:

Պայմանագրի ընդհանուր գումարը:

Պայմանագրի գումարը առկա ֆինանսական միջոցներով:

Պայմանագրի կնքման ամսաթիվ:

Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎԷՅ կող կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկան

Հավելված 4

Գնումների պլանի, կազմակերպվող ընթացակարգերի և շնորհվող պայմանագրերի միասնական թվային ծածկագրման համակարգի ներդրման մոդել

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն *պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է բյուջետային ծախսերի գերատեսչական և գործառնական դասակարգմամբ:*

Բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգումը հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ-ի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանաի հավելված N23-ով:

Նշված հավելվածը վերանայման և թարմացման կարիք ունի, բացի այդ առաջարկում ենք տվյալ հավելվածում ներառել Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն պատվիրատու հանդիսացող բոլոր կազմակերպությունները՝ դրանց շնորհելով անհատական ծածկագիր:

Տվյալ ծածկագրի հիմքով առաջարկում ենք ներդնել, թվային ծածկագրի վրա հիմնված գնումների պլանին և դեռևս պլանավորման փուլում ընթացակարգերին և հետագայում կնքվող պայմանագրերին ևս ծածկագրի շնորհման կարգ:

Առաջարկվող ծածկագրի կառուցվածքը.

YY-Q-CCCCC-XXX-W-Z-NNN-n

որտեղ՝

YY-ընթացիկ տարի՝ 17

Q- եռամսյակ

1-առաջին եռամսյակ

2-երկրորդ եռամսյակ

3-երրորդ եռամսյակ

4-չորրորդ եռամսյակ

CCCCC-պատվիրատուի անհատական ծածկագիրը ըստ գերատեսչական դասակարգման, օրինակ՝

101001-ՀՀ նախագահի աշխատակազմ

XX-հրապարակային, կենտրոնացված, կամ պետական գաղտնիք պարունակող գնումների պլան՝

01- հրապարակային գնումների պլան

02- կենտրոնացված գնումների պլան

03- պետական գաղտնիք պարունակող գնումների պլան

X-միջոցների պատկանելությունը՝

1-պետական բյուջեի միջոցներ

2-այլ միջոցներ

3-պետական բյուջեի և այլ միջոցներ

W-գնման առարկայի դասակարգումը ըստ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների՝

1-Ապրանքներ

2-Աշխատանքներ

3-Ծառայություններ

Z- գնման ձևի ծածկագիրն է՝

1-բաց մրցույթ

2-Էլեկտրոնային աճուրդ

- 3-գևանշման հարցում
- 4-մեկ անձից գնում
- 5-փակ նպատակային մրցույթ
- 6-փակ պարբերական մրցույթ

NNN-ընթացակարգի հերթական համարն է՝ 001, 002, 003...
n- ընթացակարգի շրջանակներում շնորհվող պայմանագրի հերթական համարն է՝ 1, 2, 3...

Ճածկագրման համակարգի միջոցով կազմված գնումների պլանի ծածկագիրը կունենա հետևյալ տեսքը՝ **171-101001-01**, ընթացակարգի ծածկագիրը կունենա հետևյալ տեսքը՝ **171-101001-011-3-1-001**:

Կարդալով այս ծածկագիրը հասկանում ենք 2017 թվականի առաջին եռամսյակում ՀՀ Նախագահի աշխատակազմի կարիքների համար պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող հրապարակային բաց մրցույթով ծառայությունների ձեռքբերման ընթացակարգ, որի արդյունքում շնորհված պայմանագրի ծածկագիրը կունենա հետևյալ տեսքը՝ **171-101001-011-3-1-001-1**:

Ճածկագրման միասնական համակարգի ներդրումը հնարավորություն կտա գնումների տեղեկագիրը վերածել հիերարխիկ կառուցվածքով գնումների ռեեստրի, որտեղ ծածկագրի հիման վրա կհավաքագրվի ընթացակարգի հետ կապված հրապարակվող ողջ տեղեկատվությունը՝ հետագծային սկզբունքով, որը կուժեղացնի գնումների նկատմամբ նախնական հսկողությունը, իսկ տեղեկատվության թափանցիկությունը և մատչելիությունը կապահովի հանրության կողմից գնումների նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև չի առաջանա ընթացակարգերի և շնորհված պայմանագրերի ծածկագրերը հայերենից այլ լեզուներով թարգմանելու անհրաժեշտություն:

Ներդնելով միասնական ծածկագրման համակարգ և կիրառելով այն դեռևս պլանավորման փուլում, ընթացակարգին կշնորհվի ծածկագիր դեռ գնումների պլանում և կարտացոլվեն մեկ ընթացակարգի շրջանակներում ձեռքբերվող գնման առարկաները, որի շնորհիվ նախնական հսկողություն կսահմանվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջների կատարման նկատմամբ:

Եռամսյակի ընթացքում ընթացակարգը ամբողջությամբ կամ որևէ չափաբաժնի մասով չկայանալու և վերահայտարարվելու դեպքում առաջարկվող մոդելում օգտագործվում է միևնույն ծածկագիրը՝ կատարելով «վերահայտարարված» նշումը, հաջորդող եռամսյակներում հայտարարվելու դեպքում ծածկագրում փոխվում է եռամսյակի ծածկագիրը, իսկ գնման ձևը փոխվելու դեպքում՝ գնման ձևի ծածկագիրը՝ պահպանելով ընթացակարգի հերթական համարը տարվա կտրվածքով:

2. Բյուջետային գործառնական դասակարգումը առաջարկվող մոդելում կիրառվում է ոչ թե ամբողջ պլանի համար, այլ յուրաքանչյուր չափաբաժնի, ընդ որում միևնույն չափաբաժնի համար մի քանի ծրագիր նշելու հնարավորությամբ:

Այսպիսի լուծումը կբացառի տարբեր ծրագրերով միևնույն բնութագիրը ունեցող առարկաները տարբեր ընթացակարգերով ձեռքբերումը, ինչը բխում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներից, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Հավելված 5

Գնման գործընթաց կազմակերպելու մասին ՀՀ կառավարության մի շարք որոշումների հիմնավորումների վերլուծություն

1. 26.01.17թ 38-Ն որոշում

<https://www.e-gov.am/sessions/archive/2017/01/26>

32. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը գումար հատկացնելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին

